

պարէզ եկաւ հանձարեղ հայորդին՝ Ար-
բաշայր Մխիթար Սերաստացին եւ փոր-
ձեց զօրավիզ լինել հայոց լեզուին ու հայ
աղբին:

Խօսելով քերականութիւնը զրեւել զըր-
դապատճառների մասին՝ հայագէտ Հ.
Միքայէլ Չամչեանը գրում է. «Միմանք ի
հանգամանաց յատկութեան լեզուիս հա-
յոց խոսորեցան. եւ ոմանք եւս զոճ խօ-
սից այլոց աղբաց ի ներքս մուծին. որով
սկսաւ խանդարել վայելչութիւն լեզուիս
մերոյ: Չայս տեսեալ հօր մերում ամե-
նապատիւ Մխիթարայ արքայհօր՝ կամե-
ցաւ շարադրել զնոր իմն քերականութիւն.
եւ նովին վերածել յառաջին ուղղութիւն
զբարձր լեզու հայոց: Բայց վասնզի յայ-
նում ժամանակի նորոգ հանդիսացեալ էին
բազում քերականութիւնք բազում հեղի-
նակաց, որք բազում ինչ նոր եւ օտար
խառնեալ էին ի լեզու մեր, ոչ էր հնար
հակառակ նոցին աւանդել կանոնս ըստ
բուն նախնի ուղղախօսութեան: Նմին ի-
րի ջանացաւ հայրն մեր այնպէս կարգել
զքերականութիւն իւր, զի մի՛ ներհակ ե-
րեւեսցի նոր հեղինակաց (ընդգծումը
մերն է - Յ. Մ.), բայց զիտելով միան-
գամայն եւս հորդել զճանապարհ հասա-
նելոյ յուղղութիւն նախնի լեզուին մե-
րոյ»¹²:

Ինչպէս նկատում ենք, Չամչեանի կար-
ծիքով, Մխիթար Սերաստացին թշնա-
մութիւն չյարուցելու համար՝ շատ բան
ըստ օտարամոլների է արել, քերակա-
նական որոշ իրողութիւններ շարադրել է
ըստ նրանց հայեցակէտերի: Սա բոլորո-
վին ճիշտ է, եւ մենք վստակաւ հետ
համաձայնել չենք կարող: Ընթերցողն այն
է, որ քերականական այն իրողութիւննե-
րը, որոնք իրօք գոյութիւն են ունեցել
մեր լեզուի մէջ եւ շարադրուած են եղել
իր նախորդների կողմից, Սերաստացին
իրաւացիօրէն ընդունել է զրանք:

Անշուշտ, հաշուի առնելով իր ժամա-
նակի քաղաքական գոյավիճակը, Մխի-
թար Սերաստացին որպէս զգոյշ ու հե-
ռատես զիտնական, հասարակական գոր-

ծիչ, լեզուարան ու վառ հայրենասէր,
այս առթիւ իր գրքի առաջարկումը բա-
ցայայտ ակնարկ անել չէր կարող. սա-
կայն առաջարկումը մի միտք կայ, որից
պէտք է կռահել այն վեհ նպատակը, որ
նա գրել է իր առջեւ. «Ի վարժումն նորա-
մտից աշակերտաց դասատան իւրոյ, —
զրուած է զրքի տիրոջութեան վրայ —
եւ ի յօգուտ այլոց ամենից, որք ունին ըզ-
փափագ ի գաւիթս իմաստից՝ դրամք քե-
րականութեան մտանելոյ»: Ինքը՝ Մխի-
թար Սերաստացին իր ուղերձում աւելի
յստակ ու որոշակի է ձեւակերպել իր նը-
պատակը. «... ստիպումն հարկաւորու-
թեան եւ թախանձումն բազմաց, եւ մա-
նաւանդ պիտոյութիւնն մեծագոյնեղ առ
ի զիւրացուցանել զուսումն քերականու-
թեան նորավարժից աշակերտաց մերոյս
դաստառն՝ արարին զմեզ ձեռնամուխ» —
գրում է Սերաստացին¹³:

Մխիթար Սերաստացին ճիշտ է զգա-
ցել, որ իր ապրած պատմաշրջանում եւ
լատինացման քաղաքականութեան ճանա-
պարհը բռնած միջավայրում՝ իմաստու-
թեան դաւիթը մտնել կարելի կը լինէր
միայն քերականութեան զոնով. իսկ քե-
րականութեան նպատակը հենց այն էր,
որ կարողանար կասեցնել օտար ձեռքի ա-
ւերածութիւններն ու աղաւաղումները եւ
օտար աշխարհում ապրող (եւ ինչո՞ւ մի-
այն օտար աշխարհում) իր համազգային-
ներին ցոյց տար բուն մայրենի լեզուի օ-
րինաչափութիւնները եւ զարբեր ընթաց-
քում մշակուած կանոնները:

Եթէ Արբաշօր գրքի առաջարկները զուտ
է եւ ժլատ, ապա բուն նիւթի շարադրան-
քը բացում է այդ գաղտնիքը: Խօսելով ա-
ծականի համաձայնութեան մասին, Սե-
րաստացին գրում է. «Չորրորդ գիտելի է,
զի մինչ ածական անուանի մախադասին
գոյականաց իւրեանց՝ ոչ միշտ ի հանա-
պագ ունին գիտականութիւն ներգոր-
ծութեամբ համաձայնելոյ ընդ գոյակա-

12. Հ. Մ. ՉԱՄՉԵԱՆ, Քերականութիւն Հայկա-
գեան լեզուի, Վենետիկ, 1779, առաջարկ:

13. Մ. ՍԵՐԱՍՏԱՅԻ, Քերականութիւն գրաբառ
լեզուի..., Վենետիկ, 1730, էջ 3:

նաց իւրեանց բնով եւ հոլովիւ. այլ կա-
րեն ածականի մնալով եզակի եւ ուղղա-
կան՝ գոյականի հոլովիլ եւ յոգնակա-
նալ»¹⁴:

Հետեւելով դասական հայերէսին՝ Սե-
րաստացին պնդում է, որ ըստ համաձայ-
նութեան կանոնի՝ պարտադիր չէ որ նա-
խադաս ածականները միշտ եւ ամէնուրեք
առնուեն նոյն թուով ու հոլովով, ինչ
թուով եւ հոլովով որ գործածուած են գո-
յականները: Այս դէպքում՝ ածականները
կարող են դրուել ուղղական հոլովով եւ
եզակի բնով, իսկ գոյականները կարող
են ե՛ւ հոլովուել, ե՛ւ յոգնակի դառնալ:
Օրինակ՝ «Վասն բարեպաշտ քաղաքաց
եւ աստուածասէր իշխանաց, զօրավարաց
եւ զօրաց նոցին՝ զՏէր աղաչեսցուք»¹⁵:

Այս եւ այլ դիպուկ օրինակներից յե-
տոյ, հեղինակն աւելի որոշակի է արտա-
յայտում իր նպատակը. նա գրեթէ զայ-
րազին ու ցատումնալից գրում է. «Եւ
եթէ ոք բռնաբարեալ զսովորութիւն լեզ-
ուին յամենայն ուրեք կամիցի ներգոր-
ծութեամբ համաձայնեցուցանել զմախա-
դասեցեալ ածականն գոյականի իւրով
բնով եւ հոլովիլ, ի բազում տեղիս մեր-

ժէ գիտցուրիւն արտաբերմանց բառից
եւ անհարք առնէ զարադրութիւնս, մա-
նաւանդ մինչ դժուարաւորութիւնց ածակա-
նաց հանդիպի»¹⁶:

Ինչպէս նկատում ենք, Մխիթար Սե-
րաստացին ուղղակի պայքար է յայտա-
բարում մեր լեզուի դարաւոր իրողու-
թիւններն ու սովորութիւնները խախտողնե-
րի, նրա օրինաչափութիւնները արհա-
մարհոյնների եւ լեզուի մէջ միա ու արիւն
դարձած կանոնները բռնի կերպով փոփո-
խողների դէմ, եւ դառնում է՝ որ դրանով
նրանք խաթարում են մեր լեզուի գեղեց-
կութիւնն ու բարեհնչիւնութիւնը, եւ
զրա փոխարէն հնարում են նրա հուր-
նից չբխող լեզուական կարգուսարքին
խորթ ոճեր ու ձեւեր: Այս բանն ապացու-
ցելու համար բերում է «յամենայն նե-
ղութենէ իմմէ փրկեցեր զիս» եւ «մի՛ ա-
մենայնի հոգւոյ հաւատայք» ձեւերը.
զրանք համարում է սխալ, եւ առաջար-
կում է զրանց փոխարէն՝ գործածել հա-
յերէսին հարադատ «յամենայն նեղութե-
նէ իմմէ փրկեցեր զիս» եւ «մի՛ ամենայն
հոգւոյ հաւատայք» ձեւերը: Բնական է,
որ վերջին ձեւերն աւելի հարթ են, բա-
րեհնչիւն, եւ մեր լեզուի ներքին օրինա-
չափութիւններից բխող:

(Շար. 2)

ՅԱԿՈԲ Մ. ՄԵԽԻԹԱՐԵԱՆ
(Գասախօս, Երեւան)

14. ՄԵԽԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՅԻ, նոյն տեղում, էջ 376:

15. ՄԵԽԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՅԻ, նոյն տեղում, էջ 376-
377:

16. ՄԵԽԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՅԻ, նոյն տեղում, էջ 376-
377: